448

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան
«21» 12 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0238-23

Ձեռնարկողը՝ *«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ*
Սյունիքի մարզ, ք. Մեղրի, Գործարանային 89

Գործունեությունը՝ ***Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Սյունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր՝ 7 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0238-23

«21» դեկտեմբերի 2023թ.

Սյունիքի մարզի Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ձեռնարկող՝	«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /Ա կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Սյունիքի մարզ, Մեղրի բնակավայր

Ներածական մաս. Սյունիքի մարզի Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրը գտնվում է Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի բնակավայրի վարչական տարածքում՝ Մեղրի քաղաքից մոտ 2,5կմ հարավ-արևելք:

Մոտակա Ագարակ բնակավայրից գտնվում է 7,5կմ, Ալվանք և Շվանիձոր բնակավայրերից համապատասխանաբար 7,5կմ և 9,3կմ հեռավորության վրա: Արաքս գետը հոսում է հանքավայրից շուրջ 1կմ, Արաքս գետի վտակ Մեղրի գետը, շուրջ 2կմ հեռավորության վրա:

Նշված հողամասերը ներկայացված են համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական, ընդերքօգտագործման, արտադրական նպատակային նշանակության և այլ հողատեսքերով:

Նախատեսվող գործունեությունը, հանդիսանում է Ա կատեգորիայի գործունեության տեսակ՝ համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի 2)-րդ կետի գ. ենթակետի:

Նկարագրական մաս. Հանքավայրի դիորիտների և քվարցային դիորիտների պաշարները հաստատվել են ՀԽՍՀ երկրաբանության վարչության ՊՏՀ 20 մարտի 1985թ թիվ 275 արձանագրությամբ /բացահանքի սահմաններում/ որպես հումք:

- Խիճ բնական քարերից շինարարական աշխատանքների համար /ԳՈՍ 8267-82/:
- Ծանր բետոններում որպես խոշոր լցանյութ /ԳՈՍ 10268-80, բացառությամբ մեկ շերտանի ծածկերից, երկշերտանի ծածկերի վերին շերտից և բոլոր տիպի հիդրոկառույցներից/:
- Ասֆալտբետոնի խառնուրդների և օդանավակայանների ասֆալտբետոնի /ԳՈՍ 9128-84/:
- Խիճ երկաթգծային բալաստների համար /ԳՈՍ 7392-78/:

Թափոնները որպես ավազի խառնուրդի պատրաստի հումք կարող են օգտագործվել ճանապարների կառուցման և ծածկի համար /ГОСТ 26193-84/:
Հաշվեկշռային պաշարները /հազ.մ³/,
2-րդ տեղամաս՝ A-540, C1-262, A+C1 – 802,
3-րդ տեղամաս՝ A-691, B-2934, C1-7618, A+B+C1 – 11243,
ընդհանուրը հանքավայրում A-1231, B-2934, C1-7880, A+B+C1 – 12045:
Արտահաշվեկշռային պաշարները /հազ.մ³/,
2-րդ տեղամաս՝ C1 – 2578,
3-րդ տեղամաս՝ C2– 1212,
- Ըստ ակտիվության դիորիտները և քվարցային դիորիտները բավարարում են НРБ-76 պահանջներին
- Ըստ պինդ օգտակար հանածոների հանքավայրերի պաշարների դասակարգման այն վերագրվել է 1-ին խմբին:
Օգտակար հաստաշերտը հիմնականում ներկայացված է դիորիտներով և քվարցային դիորիտներով, որոնք համատեղ կազմում են ընդհանուր զանգվածի 85,2%:
Հանքավայրը նախատեսվում է շահագործել 2 բացահանքով՝ բացահանք 1 /տեղամաս 2/ և բացահանք 2 /տեղամաս 3/:
Տեղամաս 2-ի պաշարները հիմնականում արդյունահանվել են նախկին ԽՍՀՄ ժամանակահատվածում, /դեռևս 1965թ բացահանքով/ իսկ տեղամաս 3-ը չի շահագործվել:
Բացահանք 1-ի պաշարներն արդյունահանվում են շահագործման 0.23 տարվա ընթացքում /2.7 ամիս/: Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 19 տարի:
Ըստ «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ տվյալների պաշարների մնացորդը կազմում է:
Հաշվեկշռային պաշարները /հազ.մ³/,
2-րդ տեղամաս՝ A-100, C1-20, A+C1 – 120,
3-րդ տեղամաս՝ A-691, B-2934, C1-7618, A+B+C1 – 11243,
ընդհանուրը հանքավայրում A-791, B-2934, C1-7638, A+B+C1 – 11363:
Արտահաշվեկշռային պաշարները /հազ.մ³/,
2-րդ տեղամաս՝ C1 – 2578,
3-րդ տեղամաս՝ C2– 1212,
ընդհանուրը հանքավայրում C1+C2 – 3790:
Բացահանքերի օտարման տարածքը բացահանք 1-ում -3.97հա, իսկ բացահանք 2-ում 17.6հա:
Բացահանքի տարեկան արտադրողականությունն ընդունված է 450.0հազ.մ³ օգտակար հանածոյի զանգված:
Հայցվող պաշարների եզրագիծը ARM WGS-84 համակարգով կազմում է՝
Տեղամաս 3

1. Y=8610450.4264	X=4309154.6360,	2. Y=8610496.5366	X=4309257.3068,
3. Y=8610498.2366	X=4309425.2068,	4. Y=8610430.6366	X=4309618.9068,
5. Y=8610392.3366	X=4309814.9068,	6. Y=8610389.0639	X=4309870.4805,
7. Y=8610613.2359	X=4309869.0149,	8. Y=8610622.4688	X=4309795.6407,
9. Y=8610653.0925	X=4309705.1383,	10. Y=8610679.7955	X=4309582.7223,
11. Y=8610665.4564	X=4309463.7812,	12. Y=8610707.6780	X=4309404.1975,

13. Y=8610681.6847 X=4309229.2827, 14. Y=8610689.8348 X=4309038.1946,
15. Y=8610692.8498 X=4309031.2107, 16. Y=8610688.6051 X=4309027.3715,
17. Y=8610676.5502 X=4309021.5845, 18. Y=8610667.0057 X=4308997.7270,
19. Y=8610655.8481 X=4309001.1392, 20. Y=8610553.3366 X=4309063.9068

Տեղամաս 2

1. Y=8610336.2800 X=4308844.4564, 2. Y=8610310.9366 X=4308860.4068,
3. Y=8610286.9366 X=4308966.3068, 4. Y=8610312.3911 X=4309022.8619,
5. Y=8610378.8366 X=4309109.4068, 6. Y=8610484.2075 X=4308988.8832,
7. Y=8610540.4366 X=4308922.2068, 8. Y=8610517.4366 X=4308863.9068,
9. Y=8610505.6735 X=4308859.6808, 10. Y=8610466.9371 X=4308893.8346,
11. Y=8610424.9353 X=4308864.0188

Նախագծվող բացահանքերը վերջնական դիրքում ունեն հետևյալ պարամետրերը.

	բացահանք 1	բացահանք 2
առավելագույն երկարությունը -	225մ	300մ,
առավելագույն լայնությունը -	215մ	185մ,
բացահանքերի օտարման տարածքը -	3.97հա	17.6հա,
հաշվեկշռային պաշարների քանակը -	120.0 հազ.մ^3	9263.0 հազ.մ^3,
արդյունահանվող պաշարների քանակը -	102.7 հազ.մ^3	8441.46 հազ.մ^3,

Ընդհանուր բացահանքի կորուստները բացահանք 1-ում կազմում են 17300մ^3 կամ 14.4%, բացահանք 2-ում՝ 821540մ^3 կամ 8.87%: Շահագործական կորուստները, որոնք առաջանում են օգտակար հանածոյի տեղափոխման ժամանակ, կազմում են 0"3%:

Քանի որ հանքավայրի 2-րդ տեղամասը /բացահանք 1/ շահագործվել է նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանում, ուստի նախագծով նախատեսվում է արդյունահանման աշխատանքները սկսել բացահանք 1-ի շահագործմամբ: Վերջինիս պաշարները արդյունահանվում են 0.23 տարվա ընթացքում և բացահանք 1-ը հետագայում ծառայելու է բացահանք 2-ի մակաբացման ապարների տեղադրման համար, որպես ներքին լցակույտ:

Բացահանք 1-ի հանքաստիճանների բացումն իրականացվելու է նրա արևելյան մասից մոտեցող գրունտային ճանապարհից, իսկ բացահանք 2-ի հանքաստիճանների բացումն իրականացվելու է բացահանք 1-ի արևելյան մասից մոտեցող գրունտային ճանապարհից, որը շարունակվելով ձգվում է հյուսիս՝ անցնելով բացահանք 2-ի արևմտյան մասով:

Ելնելով հանքավայրի լեռնատեխնիկական պայմաններից բացահանքերի հանքաստիճանների շահագործումը նախատեսվում է կատարել միակողմանի, խորացող, ընդլայնական ընթացքաշերտերով մշակման համակարգով:

Մակաբացման ապարների հեռացումը կատարվում է էքսկավատոր-ավտոինքնաթափ լեռնատրանսպորտային համալիրով:

Լեռնային զանգվածի հանույթաբարձման աշխատանքների համար ընդունված է 2.3մ^3 շերեփի տարողությամբ, հակառակ բահով սարքավորված KOMATSU PC 400-8 մակնիշի էքսկավատորը:

Մակաբացման ապարները բացահանք 1-ի սահմաններում բացակայում են, քանի որ վերջիններս արդյունահանվել են դեռևս նախկին ԽՍՀՄ ժամանակաշրջանում:

Մակաբացման ապարները բացահանք 2-ի սահմաններում 451950մ³ ծավալով ներկայացված են բուսահողով՝ 35250մ³, ալյուվիալ, դելյուվիալ, պրոլյուվիալ առաջացումներով 278800մ³, ժայռային ապարներով 90390մ³ և ներքին մակաբացման ապարներով 47510մ³:

Բացահանք 2-ի մինչև 635մ նիշ ունեցող հորիզոնի շահագործումն արդյունահանվող մակաբացման ապարները 306430մ³ ընդհանուր ծավալով տեղադրվում են բացահանք 1-ի հատակում 12մ բարձրությամբ՝ ձևավորելով ներքին լցակույտ: Վերին հարթակի մակերեսը՝ 2.56հա, լցակույտի ընդհանուր մակերեսը 3,05հա:

635մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց մակաբացման ապարները՝ 145520մ³ ընդհանուր ծավալով, տեղադրվում են բացահանք 2-ի 645մ նիշ ունեցող հորիզոնի հատակում 7մ բարձրությամբ՝ ձևավորելով ներքին լցակույտ: Վերին հարթակի մակերեսը 2.1հա, լցակույտի ընդհանուր մակերեսը՝ 2.27հա:

Բացահանք 2-ի 585մ նիշ ունեցող հորիզոնի շահագործմանը զուգընթաց 645մ նիշ ունեցող հորիզոնի վրա ձևավորված լցակույտից 7573մ³ ծավալով բուսահողը տեղափոխվում է 585մ նիշ ունեցող հորիզոն և հարթեցվում բուլդոզերային եղանակով:

Լեռնային աշխատանքների ժամանակ բացահանքի շահագործումը նախատեսվում է կատարել 10մ բարձրությամբ հանքաստիճաններով վերևից ներքև հաջորդաբար:

Խախտված տարածքների վերջնական լեռնատեխնիկական վերականգնումներն իրականացվելու են արդյունահանման աշխատանքների ավարտից հետո բուլդոզերի օգնությամբ:

Ռեկուլտիվացիայի են ենթարկվելու բացահանք 1-ում տեղադրված ներքին լցակույտի մակերևույթը՝ 2.6հա, բացահանք 2-ի հատակը ողջ մակերեսով՝ 6.2հա, և արդյունաբերական հրապարակը՝ 1200մ²: Ընդհանուր մակերեսը կլինի՝ 8.92հա:

Լեռնատեխնիկական ռեկուլտիվացիայից հետո իրականացվելու է կենսաբանական ռեկուլտիվացիա, որի 1հա մակերեսի համար նախատեսվում է 100000 դրամ: Ընդհանուր նախատեսվում է 892000 ՀՀ դրամ: Ամբողջ ռեկուլտիվացիայի արժեքը կկազմի 2971400 ՀՀ դրամ:

Բացահանքի շահագործման ընթացքում առաջանում են բնապահպանական տեսակետից տարբեր վտանգավորության թափոններ, որոնցից են՝ մեքենաներում ու մեխանիզմներում փոխվող օգտագործված յուղերն ու քսայուղերը, մաշված դետալների փոխարինման ժամանակ առաջացած մետաղի ջարդոնը, մաշված ավտոդողերն ու կենցաղային աղբը:

Տեղամասի տարածքում աղմուկի թույլատրելի մակարդակը բնակելի գոտում կազմում է 45 դԲԱ:

Բացահանքի տեխնիկական և կենցաղային ջրամատակարարումը կատարվելու է ավտոցիստեռնով:

Աշխատանքային օրերի քանակը տարվա ընթացքում ընդունված է 260 օր, աշխատանքային հերթափոխերի քանակը օրում –2, հերթափոխի տևողությունը - 8ժամ /աշխատանքային ժամերը՝ 1-ին հերթափոխ 8.00 – 16.00, 2-րդ հերթափոխ 16.00 – 24.00/:

Ըստ հաշվետվության մեջ եղած տեղեկատվության՝ Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրի շրջանում բնության հատուկ պահպանվող տարածքներ, որտեղ իրականացվում է վտանգված էկոհամակարգերի պահպանություն, չկան:

Բուն հայցվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքի սահմաններում: Հայցվող տարածքում համապատասխան մասնագետների ուսումնասիրությամբ չեն արձանագրվել ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում նշված բուսական կամ կենդանական տեսակների աճելա և ապրելավայրեր:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

-Լեռնային տեխնիկայի շարժիչների վառոցքները պետք է լինեն կարգավորված, ինչը կնվազեցնի մթնոլորտ արտանետվող գազերի քանակը:

- Դիզելային շարժիչներով աշխատող լեռնատրանսպորտային սարքավորումների վրա խլացուցիչների և արտանետվող գազի հոսքի վրա պետք է տեղադրվեն զտիչներ՝ թունավոր խառնուրդների չեզոքացման համար:

- Փոշենստեցման նպատակով կիրականացվի փոշեառաջացման օջախների ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

- Կիրականացվի լցակույտի մակերեսների, խախտված տարածքների ընթացիկ ռեկուլտիվացիա:

- Մթնոլորտային օդում փոշու և աղտոտող նյութերի պարբերական մոնիթորինգի իրականացում, ստացված տվյալների վերլուծություն, ըստ անհրաժեշտության բնապահպանական միջոցառումների վերանայում:

- Արտադրական տարածքը պետք է կանաչապատվի արագ աճող ծառատեսակներով կամ թփերով:

- Կիրականացվի ճանապարհների խճապատում, ինչը կնվազեցնի փոշեգոյացումը և հնարավորություն կտա կրճատել տեխնիկական ջրի ծախսը, հետևաբար և ջրառը:

– Բացահանքի շահագործման արդյունքում առաջացող արտադրական կեղտաջրերի կհավաքվեն անթափանց հորի մեջ, հետագա դատարկումը կկազմակերպվի մասնագիտացված ընկերության ուժերով;

-ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում, ըստ կիրառելիության՝ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում կկատարվի:

-Նավթամթերքներ պարունակող թափոնները (յուղոտ լաթեր, բանեցված, ավտոմոբիլային, դիզելային շարժիչների յուղեր) առանձին կհավաքվեն ամուր փակվող տարողությունների մեջ: Տարողություններ կտեղադրվեն հատուկ հրապարակներում, ջերմության աղբյուրներից սահմանված հեռավորությունների վրա:

- Բանեցված կապարե կուտակիչները կպահվեն մետաղական տարողություններում կամ արկղերում/տուփերում, որոնցում դատարկ տարածությունները կլցվեն ամորտիզացման միջոցներով: Հետագայում բանեցված կապարե կուտակիչները նախատեսվում է հանձնել վերամշակման լիցենզիա ունեցող մասնագիտացված կազմակերպությանը:

- Կենցաղային աղբը կտեղափոխվի մոտակա աղբահավաք կետեր, սպասարկման պայմանագրեր կկնքվեն ծառայություն մատուցող կազմակերպության հետ:

- Աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների շարժիչները կկահավորվեն հատուկ ձայնամեկուսիչ պատյաններով:

- Աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում պետք է իրականացվի Մեղրի բնակավայրում:

Հանքավայրի շահագործման աշխատանքների ընթացքում «ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ-ն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

- Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ բացահանքի տարածքում ավտոճանապարհներին, արտադրական հրապարակի տարածքում՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:
- Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ հաճախականությամբ:
- Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով, ՀՀ կառավարության 24.08.2007թ.-ի թիվ 1277-Ն որոշմամբ սահմանված աղտոտիչ նյութերով արտադրական հրապարակի և մոտեցնող ճանապարհի շրջակայքի հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարեկան մեկ անգամ հաճախականությամբ;
- Վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքերում ընդգրկված, էնդեմիկ տեսակներ տարին մեկ անգամ հաճախականությամբ:
-Ջրի որակի պարբերական մշտադիտարկումներ՝ամսական մեկ անգամ հաճախականությամբ: Մշտադիտարկումների համար նախատեսված է տարեկան 550.0 հազ" ՀՀ դրամ գումար:

Պատճառաբանական մաս. Օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Սյունիքի մարզի Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ իրականացվել են հանրային քննարկումներ Սյունիքի մարզի Մեղրի համայնքում, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմիններն ու հանրությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեության իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ներքին ստորաբաժանումները, առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն և Սյունիքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի 191-Ն որոշման պահանջներով, շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը նշված որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
-Հանքավայրի շահագործման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը:
- Անհրաժեշտ է ապահովել հաշվետվությունում ամրագրված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:
- Բացահանքի աշխատանքային գործընթացում ներգրավել համայնքի և մոտակա համայնքների բնակիչներին, ինչպես նաև համայնքի ղեկավարության հետ քննարկել անհրաժեշտ օգնության ծրագրեր և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքային բյուջե:
-ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ

հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանման միջոցառումներ իրականացնելու համար:

-Անհրաժեշտ է իրականացնել կենդանական և բուսական աշխարհի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

- Անհրաժեշտ է աղմուկի աղբյուր հանդիսացող մեքենաների սահմանափակում գիշերային ժամերին, ինչպես նաև աղմուկի մակարդակի պարբերական վերահսկում Մեղրի բնակավայրում:

- Աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՄԵՂՐՈՒ ՃՇՇՁ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Սյունիքի մարզի Մեղրիի դիորիտների և քվարցային դիորիտների հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ՝ Հովիկ Մեսրոպյան